ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.9 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի **մեթոդիստի (0.5 դրույք)** թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (ՁԵ1),մեկ լուսանկար 3x4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ՁԵ4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկնամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. սեպտեմբերի 8-ից մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. հոկտեմբերի 10-ին՝ ժամը 13:30-ին «Երևանի հ.9 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Հանրապետության 62:

Տեղեկությունների համար զանգահարել **(010) 54-04-41** հեռախոսահամարով: